

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Վահան Հովհաննիսյանի, Աղվան Վարդանյանի և Արմեն Բաբայանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-076-06.09.2012-ՏՀ) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը: Այսինքն, նշված օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը հարկման ենթակա չի լինելու և այն աշխատողին վճարման ենթակա տնօրինվող աշխատավարձի նվազագույն չափն է: Ընդ որում, նշված մոտեցումը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-290-Ն օրենքով՝ նպատակ ունենալով ապահովել Աշխատանքի միջազգային կազմակերպության «Նվազագույն

աշխատավարձի սահմանման մասին» N 131 կրկնէնցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի իրագործումը:

2. Այն հանգամանքը, որ 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նվազագույն ամսական աշխատավարձը հարկման նպատակով չի դիտարկվել որպես նվազեցվող եկամուտ, դեռևս չի նշանակում, որ 2013 թվականի հունվարի 1-ից գործատուները կարող են «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ նվազագույն ամսական աշխատավարձից ցածր աշխատավարձ վճարել: Նշվածը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով՝

1) ներկայումս գործող «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձին համարժեք եկամուտը՝ ամսական 32500 դրամի չափով, հարկման նպատակով նվազեցվում է համախառն եկամտից և հետևաբար չի հարկվում եկամտահարկով:

2) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, օրենքն ուժի մեջ մտնելու պահից գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխատողներին նույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձից պահված և վճարված եկամտային հարկի ամբողջ գումարի չափով լրացուցիչ պարտավորություն, եթե օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցրել է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշվող մեծության նվազման:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված՝ անվանական աշխատավարձերի վերահաշվարկման պահանջի հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 692-Ն որոշմամբ: Նշված որոշմամբ, մասնավորապես, ամրագրվել է,

որ 2013 թվականի հունվարի 1-ից հետո վարձու աշխատողներին վճարվող պաշտոնային դրույքաչափային աշխատավարձի տնօրինվող (հարկումից հետո) մակարդակը չպետք է պակաս լինի ինչպես 2012 թվականի ընթացքում փաստացի վճարված պաշտոնային դրույքաչափային աշխատավարձի միջինացված մեծությունից, այնպես էլ 2012 թվականի դեկտեմբերին վճարված (վճարվող) տնօրինվող աշխատավարձի մեծությունից.

3) վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 1-ին մասով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և (կամ) 2-րդ հոդվածներով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն:

3. Եկամտային հարկը հանդիսանում է միասնական հարկ, որը ներառում է ներկայումս գործող եկամտահարկն ու պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Ընդ որում, հաշվի առնելով եկամտահարկի դրույքաչափերի աճող (պրոգրեսիվ) և պարտադիր սոցիալական ապահովության վճարների դրույքաչափերի նվազող (ռեգրեսիվ) բնույթը՝ եկամտային հարկի դրույքաչափերը սահմանվել են այնպես, որպեսզի բացառվի՝

ա) գործատուների՝ աշխատավարձերի ուղղությամբ կատարվող ծախսերի էական ավելացումը,

բ) վարձու աշխատողների փաստացի եկամուտների նվազեցումը,

գ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների նվազեցումը:

Այդ կապակցությամբ, հայտնում ենք, որ եթե նվազագույն ամսական աշխատավարձը չհարկելու առաջարկության ընդունումը չուղեկցվի ներկայումս «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ եկամտային հարկի դրույքաչափերի բարձրացմամբ, ապա առաջարկության ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների անհիմն նվազեցման, ինչի արդյունքում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացումը, և, մասնավորապես, կենսաթոշակների և ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարումը կարող է ամբողջովին վտանգվել, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատես-

ված առանձին ծրագրեր (այդ թվում՝ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող) կարող են մնալ առանց ֆինանսավորման:

Ինչ վերաբերում է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ եկամտային հարկի դրույքաչափերի հնարավոր բարձրացմանը, ապա քաղաքականության նման մոտեցումն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա արդյունքում վարձու աշխատողների հարկային բեռը և (կամ) գործատուների ծախսերը կարող են աճել:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի ընդունումը համարում է ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի**

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը

1) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի բացասական ազդեցություն,

շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:

**ՀԱՎԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
<<Եկամտային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության
բնագավառում կարգավորման**

1. <<Եկամտային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Նախագծի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրել, որ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ նվազագույն ամսական աշխատավարձը հարկման նպատակով դիտարկվելու է որպես համախառն եկամտից նվազեցվող եկամուտ և ըստ այդմ՝ եկամտային հարկով հարկման ենթակա չի լինելու:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա կունենա բացասական ազդեցություն և միաժամանակ կհանգեցնի Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի նվազեցման, ինչը մեր գնահատմամբ կկազմի շուրջ 16 մլրդ դրամ:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման առավել կոնկրետ եզրակացություն հնարավոր է տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13 արձանագրային որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ բաժնի 14-րդ գլխով նախատեսված ձևաչափով փաստաթղթերի ներկայացման պարագայում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ)
սահմանվում է, որ նվազեցվող եկամուտ է համարվում նաև նվազագույն
ամսական աշխատավարձը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ
ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային
շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության
գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի
ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու*
եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ
օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին
ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության
գնահատման**

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ
օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի
վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են
նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը*
վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական
աշխատավարձը նվազեցվող եկամուտ համարելուն և Նախագծի ընդունման
դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի
վրա ազդեցություն չի նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«33) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

Մինչեւ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ՀՀ օրենսդրության համաձայն նվազագույն աշխատավարձը հարկման ենթակա չի եղել, սակայն ընդունված օրենքով այն պետք է հարկվի 2013 թվականի հունվարի 1-ից:

Նվազագույն աշխատավարձի չհարկումը համապատասխանում էր ինչպես ՀՀ Սահմանադրության 32-րդ եւ 34-րդ հոդվածների պահանջներին, այնպես էլ ՀՀ կողմից ընդունված միջազգային պարտավորություններին: Մասնավորապես, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) թիվ 131՝ նվազագույն աշխատավարձի սահմանման մասին, կոնվեցիայի (Հայաստանում ուժի մեջ է մտել 2006 թվականի ապրիլի 29-ից) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նվազագույն աշխատավարձն ունի օրենքի ուժ եւ նվազեցման ենթակա չէ: Ընդ որում, այս դրույթի չկիրառումը պատասխանատու անձի կամ անձանց նկատմամբ առաջացնում է քրեական կամ այլ պատասխանատվություն: Այս կոնվեցիայում ամրագրված պարտավորությունները ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴՈ 527 որոշմամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Ինչպես ամրագրված է ՍԴ վերոհիշյալ որոշման 3-րդ կետում, կոնվեցիայով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես. ապահովել, որպեսզի նվազագույն աշխատավարձը չնվազեցվի, ինչպես նաեւ ստեղծել ազգային պայմաններին եւ պահանջներին հարմարեցված այնպիսի ընթացակարգ, որը թույլ կտա ժամանակ առ ժամանակ վերանայել նվազագույն աշխատավարձը:

Հետեւաբար, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ այն, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, վավերացված միջազգային պայմանագրով սահմանված նորմն ունի ՀՀ օրենքի նորմի նկատմամբ գերակայող իրավական ուժ, անհրաժեշտ է, որպեսզի «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցվի ՀՀ ԱԺ կողմից 2005 թվականի հոկտեմբերի 3-ին վավերացված ԱՄԿ թիվ 131 կոնվենցիայի պահանջներին:

Օրինագծի ընդունումը համահունչ է ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակին:

Օրինագիծը մշակել են ՀՅԴ խմբակցության պատգամավորները եւ փորձագետները: